ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության
միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին
հաշվետվության սեղմագիր
ԶԼՄ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Օրենսդրական բարեփոխումներ (նախաձեռնություններ)

1. «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
2. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
3. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
4. «Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
5. «Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ:
6. «Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:
7. Նախարարության նախաձեռնությամբ Քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել և հաստատվել է հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում սանհանգույցներին ներկայացվող պահանջների ուղեցույցը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- **Սահմանամերձ համայնքներին տրամադրվող սոցիալական աջակցություն**

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հատկացվել է շուրջ 928 մլն դրամ, որի շրջանակներում սոցիալական աջակցություն է տրամադրվել սահմանամերձ համայնքների բնակավայրերի ընտանիքներին՝ բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով: Սոցիալական աջակցությունը տրամադրվել է ընդհանուր առմամբ 16 համայնքի 37 բնակավայրերի ընտանիքներին:

- **Մարզերում առաջնահերթ խնդիրների լուծման ուղղված ծրագրեր**

2018 թվականին ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքների համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին և ՀՀ մարզպետարաններին է հատկացվել 3 975 069. 3 հազ դրամ՝ 216 ծրագրերի իրականացման նպատակով: Մասնավորապես՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին հատկացվել է 3 657 994.3 հազ դրամ՝ 192 ծրագրի և ՀՀ մարզպետարաններին՝ 317 075.0 հազ դրամ, 24 ծրագրի իրականացման համար: Հատկացված գումարները հիմնականում ուղղվել են դպրոցների ջեռուցման, հիմնանորոգման, բազմաբնակարան շենքերի տանիքների, ջրագծերի վերանորոգումների, ինչպես նաև տարբեր այլ ծրագրերի իրականացման համար:

- **Տարածքային զարգացման ծրագրեր**

Նախարարության հետ համագործակցությամբ ԵՄ-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցով իրականացվել են ծրագրեր, որոնք ուղղված են տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմանը:

- **ԱԳԼՃԿ-ներում առկա հասարակական զուգարանների վիճակի բարելավում**

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի ապահովում -** 2018թ. ընթացքում ՀՀ 117 համայնքներից ստացվել և ուսումնասիրվել են թվով 230 սուբվենցիայի հայտ: Սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կայացած թվով 7 նիստերի

ընթացքում քննարկվել և հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել 180-ը: Կառավարության կողմից հաստատված համապատասխան 7 որոշումներով թվով 152 սուբվենցիայի ծրագիր համաֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեից 1,620 մլրդ ՀՀ դրամի չափով: Հանձնաժողովի կողմից հավանության արժանացած 180 ծրագրերից 25-ի իրականացումը եղանակային պատճառներով տեղափոխվել է 2019 թվական, իսկ 3 համայնքներ հրաժարվել են ծրագրի իրականացումից:

- **ՀՀ մարզերում գործարար ակտիվության խթանման գործընթաց** - ՀՀ տարածքներում տնտեսական ակտիվությունը խթանելու, դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային գործարար ծրագրերի առցանց հարթակի (on-line) ստեղծման և դրա կայացման աշխատանքների ապահովում: Միջոցառման կատարման նպատակով ՀՀ բոլոր մարզերից հավաքագրվել, ամփոփվել և համապատասխան ձևաչափով պատրաստվել են թվով 150 ներդրումային-գործարար ծրագրային առաջարկներ (հայերեն և անգլերեն լեզուներով):

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- **Տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող օրենսդրության կատարելագործում**
- **Տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրում և դրանց գործառնական հնարավորությունների ընդլայնում**
    - *Գույքային հարկերի տվյալների էլեկտրոնային միասնական բազայի ստեղծում*
    - *10000 կամ ավելի բնակչություն ունեցող համայնքներում ավագանու նիստերը կամ հանրային նշանակության այլ միջոցառումները համացանցում առցանց հեռարձակելու հնարավորության ապահովում*
    - *Միավորված համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում*
    - *Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ* - Միավորված բազմաբնակավայր համայնքներից 10-ում հիմնվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ), որոնց շնորհիվ համայնքապետարանները հնարավորություն ունեն բնակչությանը համայնքային ծառայություններ մատուցել «մեկ պատուհան» սկզբունքով:

Միջտարածաշրջանային և միջազգային համագործակցություն

- **ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համագործակցությամբ միջազգային կառույցների իրականացվող ծրագրեր** - Հաշվետու ժամանակահատվածում ԵՄ-ի միջոցով, վերջինիս ֆինանսավորմամբ և ազգային համաֆինանսավորմամբ իրականացվում են տարածաշրջանային զարգացման պիլոտային 8 ծրագրեր: Ծրագրերը կրում են շարունակական բնույթ և դրանց ավարտը նախատեսվում է 2020 թվականին: Ծրագրերի իրականացման արդյունքում արդեն իսկ ստեղծվել են շուրջ 180 նոր աշխատատեղեր և բարձրացվել է ավելին քան 160 ձեռնարկությունների մրցունակությունը:
- ՄԱԳ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվում են՝ - **«Ինտեգրված աջակցություն գյուղական տարածքների զարգացմանը»**, **«Համայնքների դիմակայության ամրապնդում»** ծրագիրը և **«Գյուղական զբոսաշրջության ինտեգրացված զարգացում» ծրագիրը:**
- Անցկացվել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային յոթերորդ համաժողովը:
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում իրականացվել են Ֆրանկոֆոնիայի ավանի «Հայաստան» տաղավարի կազմակերպման աշխատանքներ:
- Անցկացվել է Արևելյան գործընկերության տարածքային և տեղական իշխանությունների համաժողովի՝ «Ապակենտրոնացում և տեղական տնտեսական զարգացում» խորագիրը կրող միջոցառումը: